ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«29» 08 2016թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 69

Ձեռնարկողը՝ ***<<Ծովածոց>> ՍՊԸ***
ք. Սևան, Սարգիս Սևանեցու 9, բն.6

Գործունեությունը՝ ***Չկալովկա համայնքի վարչական տարածքում նախատեսվող ժամանակակից գյուղական տուրիզմի և հանգստի կենտրոնի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ՀՀ Գեղարքունիքի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 69

«29» 08 2016թ.

<<Ծովածոց>> ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Գեղարքունիքի մարզի Չկալովկա համայնքի վարչական տարածքում նախատեսվող ժամանակակից գյուղական տուրիզմի և հանգստի կենտրոնի նախնական գնահատման հայտի վերաբերյալ

Պատվիրատու՝	<<Ծովածոց>>ՍՊԸ
Նախագծող՝	«Նոբիլե Ա.Մ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Աշխատանքային նախագիծ, Նախնական գնահատման հայտ
Տեղադրման վայրը՝	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Չկալովկա համայնք
Գործունեության կատեգորիան	/Գ/ կատեգորիա

Համաձայն ներկայացված նախագծի <<Ծովածոց>> ՍՊ ընկերությունը նախատեսում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Չկալովկա համայնքի վարչական տարածքում՝ 12-րդ փողոց N 29 հասցեով ժամանակակից գյուղական տուրիզմի և հանգստի կենտրոնի կառուցում:

Վարձակալության իրավունքով պատկանող հողատարածքի մակերեսը համաձայն 11.02.2008թ N 2523466 անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականի կազմում է 24000 ք.մ: Նախագծման համար հիմք է հանդիսացել 02.հոկտեմբերի.2016թ տրամադրված N 2 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Կառուցապատվող հողատարածքը գտնվում է Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափամերձ գոտում, լճակուտակումային հարթավայրի սահմաններում: Տարածքը իրենից ներկայացնում է համեմատաբար հարթ տարածք, մակերեսի թեքությունը հյուսիս - արևելք, դեպի Սևանա լճի կողմը: Տարածքի բացարձակ նիշերը տատանվում են 1901.5- 1906.0 մետրի սահմաններում:

Առաջին փուլով նախատեսվում է տարածքում ապօրինի կառուցապատված կառույցների ապամոնտաժում, այդ թվում՝

թվով 3 հատ 6.5x9.0 մ չափերի գործարանային արտադրության շարժական տնակների ապամոնտաժում;

- 3.0 x.6,0 մ չափերով տնակի և 3.0 x 6.0 մ չափերով շվաքարանի ապամոնտաժում;
- 9.5 x 12.0 մ չափերի հավաքովի տնակի ապամոնտաժում:

Նոր նախատեսվող շինությունների կառուցապատումն իրականացվում է 1905.0 բացարձակ նիշից բարձր, իսկ 1905.0 նիշից ներքև հատվածը կկահավորվի ՀՀ Կառավարության 18. 12. 2008 թ. թիվ 1563-Ն որոշմամբ սահմանված լողափի և բուֆերային գոտիների սարքավորումներով ու տարրերով:

Հանգստի գոտու տարածքում նախատեսվում է կառուցել՝

Սենդի սպասարկման կետ - 312.7 քմ մակերեսով 30 - 35 հանգստացողների համար: Սպասարկման կետը իրականացվելու է մետաղական հիմնակմախքով 10 սմ հաստությամբ "սենդվիչ", տիպի պենոպլաստյա սալիկային պատերով, փայտյա հեծանների ու տախտակների համադրությամբ:

- քոթեջ-տնակներ համապատասխանաբար 112.3 քմ և 102.8 քմ մակերեսներով, երկսենյականոց՝ 6-8 հանգստացողների համար: Քոթեջ տնակները իրականացվելու են մետաղական հիմնակմախքով 10 սմ հաստությամբ "սենդվիչ" տիպի պենոպլաստե սալիկային պատերով, փայտյա հեծանների ու տախտակների համադրությամբ:
- Հյուրանոցային շինություն 309.3 քմ մակերեսով 7 առանձնասենյակներով յուրաքանչյուրը 2- 3 հանգստացողների համար:

Հյուրանոցային շինությունն իրականացվելու է ուղիղ կտրվածքի տուֆ քարի շարվածքով՝ փայտյա հեծանների և տախտակի ծածկով:

- Գիշերակացի քոթեջ - տնակ՝ 154.3 քմ, բաղկացած է 4 գործարանային արտադրության շարժական տնակներից և նախատեսված է գիշերակացի համար:
- Գյուղական թոնիր, գյուղական արհեստագործության ցուցասրահ և խաղասենյակ՝ 267.4 քմ, իրականացվելու է տուֆ քարի շարվածքով փայտյա հեծանների և տախտակների համադրությամբ:
- Սենդի կետի առանձնասենյակներ՝ 71.4 քմ, իրականացվելու է 10 սմ հաստությամբ "սենդվիչ" տիպի պենոպլաստե սալիկային պատերով, փայտյա հեծանների ու տախտակների համադրությամբ:
- Դեկորատիվ ջրավազան՝ 72.5 քմ:

Ընդհանուր կառուցապատման մակերեսը՝ 1880 քմ,
Անջրանցիկ տարածքի մակերեսը՝ 2000 քմ:

Նախագիծն իրականացվել է հնարավորինս ապահովելով գյուղական միջավայրի պահպանումը:

Սենդի սպասարկման կետը և առանձնասենյակները կարող են սպասարկել 60-65 հաճախորդի, հյուրանոցային շինությունը և քոթեջնեները կարող են ընդունել 25-30 հանգստացողի, գիշերակացի քոթեջ-տնակները՝ 8-10 մարդ:

Հանգստի գոտու ջրամատակարարումը իրականացվելու է բերովի եղանակով: Հանգստի գոտու շրջակայքում կեղտաջրերի հեռացման կոլեկտոր չկա, առաջացող հոսքաջրերի մաքրման համար ընտրվելու է կենսաբանական մաքրման կայան, որը կապահովի Սևանա լճի համար հաստատված նորմերը: Համաձայն մաքրման կայանի անձնագրային տվյալների մաքրված ջրերը համապատասխանում են ձկնատնտեսական ջրամբարների նորմերին և համապատասխան վնասազերծումից հետո կարող են օգտագործվել նաև ոռոգման նպատակով, իսկ ավելցուկը լցնել լիճ:

Նմանատիպ տեխնիկական ցուցանիշներով կայան է հանդիսանում 'ՅՈՒԲԱՍ ՅԻԿԼՈՆ' տեսակի մոդուլային կենսաբանական մաքրման կայանը, սակայն պատվիրատուն իր հայեցողությամբ կարող է տեղադրել նաև նմանատիպ կամ ավելի լավ ցուցանիշներով մաքրման կայան:

Հանգստի գոտու շինարարության փուլում մթնոլորտի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընացքում առաջացող արտանետումներով: Շինարարական աշխատանքները կրում են ժամանակավոր բնույթ և չունեն զգալի ազդեցություն:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում ազդեցությունը մեղմելու համար անհրաժեշտ է՝

- շինարարական օբյեկտը ծածկել համապատասխան բարձրություն ունեցող անթափանց թաղանթով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենանարի անվադողերը լվանալ,
- շինանյութերը՝ ավազը, ցեմենտը, գաջը, խիճը և շինարարական աղբը տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,
- շինհրապարակում օրվա ընթացքում պարբերաբար ջրել,

02543163 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՂԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ЦЕНТР ЭКСПЕРТИЗЫ И ЗАКЛЮЧЕНИЯ COMMISSION OF EXPERTS

- հողման աշխատանքներ իրականացնելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,

- սորուն նյութերը (ավազ, գաջ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,

- շինարարական աղբը տեղափոխել միայն հատկացված վայրեր:

Բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ՝

- նախատեսվող շինարարության համար շինհրապարակներն այնպես են ընտրված, որպեսզի արդյունքում բուսական աշխարհին վնաս չպատճառվի:

- Տարածքները, որտեղ իրականացվելու է շինարարություն, զուրկ են բուսական ծածկույթից:

- տեղաշարժվելու համար օգտագործվելու է բացառապես գոյություն ունեցող արահետները և ճանապարհները՝ տրորումից խուսափելու համար:

- տարածքում տեղադրվելու է ժամանակակից հակարիդեհային անվտանգության համակարգ հրդեհային վտանգներից խուսափելու համար:

Կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ.

- Շինարարությունն իրականացվելու է թեթև և քիչ աղմուկ առաջացնող տեխնիկական միջոցներով:

- Շինարարության ընթացքում վիբրացիա առաջացնող տեխնիկական միջոցներ չեն օգտագործվելու:

Շահագործման ընթացքում մթնոլորտ արտանետումներ չի նախատեսվում, հանգստի գոտին չի գազաֆիկացվելու:

Հանգստի գոտու ջրամատակարարումը իրականացվելու է միանալով ջրմուղի համանուն ցանցին:

Հանգստյան գոտում ջուրն օգտագործվում է միայն խմելու և կենցաղային նպատարկերի համար: Կոմունալ-կենցաղային ջրածախսն իր մեջ ընդգրկում է հանգստացողների, տնտեսական և կոմունալ-կենցաղային ջրածախսը և ոռոգման համար անհրաժեշտ ջրօգտագործումը:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո համալիրի տարածքը կկանաչապատվի և կբարեկարգվի:

Փորձաքննական պահանջ

Կանաչապատման աշխատանքներն իրականացնելիս տեսակային կազմը համաձայնացնել «Սևան» ԱՊ» ՊՈԱԿ հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Ծովածոց>>ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Գեղարքունիքի մարզի Չկալովկա համայնքի վարչական տարածքում նախատեսվող ժամանակակից զբոսաշրջային տուրիզմի և հանգստի կենտրոնի նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ Ա. Մինասյան